Գնացեք տեսեք՝ ով է կերել այծը

Գնացեք տեսեք՝ ով է կերել այծը:
Գնացին տեսան՝ գայլն է կերել այծը:
Գայլն ու այծը,
Այծն ու գայլը
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ:

Գնացեք տեսեք՝ ով է կերել գայլը:
Գնացին տեսան՝ արջն է կերել գայլը:
Արջն ու գայլը,
Գայլն ու այծը,
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ:

Գնացեք տեսեք՝ ով է կերել արջը:
Գնացին տեսան՝ թուրն է կերել արջը:
Թուրն ու արջը,
Արջն ու գայլը,
Գայլն ու այծը,
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ:

Գնացեք տեսեք՝ ով է կերել թուրը:
Գնացին տեսան՝ ժանգն է կերել թուրը:
Ժանգն ու թուրը,
Թուրն ու արջը,
Արջն ու գայլը,
Գայլն ու այծը,
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ:

Գնացեք տեսեք՝ ով է կերել ժանգը:
Գնացին տեսան՝ հողն է կերել ժանգը:
Հողն ու ժանգը,
Ժանգն ու թուրը,

Թուրն ու արջը,
Արջն ու գայլը,
Գայլն ու այծը,
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ: